

Վերջին հաշուով ո՛չ թէ Ռուսաստանի, այլ իսլամութեան կեդրոնացումը ապահովել, կը թուի ըլլալ Յալիկովներու մտահոգութիւնը:

Բայց թերեւս լաւագոյն կ'ըլլայ տալ երկու ականաւոր քաղաքական գործիչներուն ճառերը, որոնց շուրջ կեդրոնացան Մոսկուայի Մայիսեան համագումարին բուն վիճարանութիւնները:

Այս ճառերը կ'անենք, քիչ մը համառօտելով, Der Neue Orientի խմբագրութեան ձեռքը անցած մէկ թուոյցիկէն, ուր տրուած է համագումարի անցուղարձեւուն ներքին աստուր: (St'u Der Neue Orient Sonderbeilage 2 zu Band II, Heft 10, Feb. 1918. "Zwei Ansichten Ueber das politische Programm des russischen Islam").

**ՅԱԼԻԿՈՎԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ**

«Ազգի մը զարթնումը երկու տեսակ կրնայ ըլլալ—կուլտուրական եւ քաղաքական: Ռուս Յեղափոխութիւնը մեր առջեւ կը բանայ մեծ կարելիութիւններ երկու ուղղութեամբ ալ: Այդ պատճառով մեր պարտականութիւնն է օգտագործել պահը...»

«Այս բանին հասնելու համար մենք պէտք ունինք նախ՝ կուլտուրական, ապա՝ քաղաքական ուժեղ օրգաններու: Առաջին նպատակի իրագործումին համար մենք պէտք ունինք կուլտուրական ինքնավարութեան, երկրորդ նպատակին հասնելու համար մենք պէտք է կեդրոնացնենք մեր քաղաքական ոյժերը: Սակայն, ատոր վրայ մենք առ այժմ մտածել անգամ չենք կրնար: Մեզի կը մնայ մէկ բան՝ համոզել ոռուսական կառավարութիւնը, որ մեզ օգնէ մեր կուլտուրական ինքնավարութեան վերարեւել իդէալները իրականացնելու:

«Մեր թիւով մենք կրնանք, եթէ համերաշխարար գործենք, կարելոր տեղ մը գրաւել կառավարական գործերու ղեկավարութեան մէջ . . . Bluntschli փիլիսոփան կ'ըսէ «Ամէն ժողովուրդ իր սեփական պետութիւնը պէտք է կազմէ. աշխարհը պէտք է բաժնուի զանազան պետութիւններու ազգութեան սկզբունքին համաձայն, եւ ամէն ժողովուրդ պէտք է ունենայ իր ազգային կառավարութիւնը»: Երբ այս տեսութիւնը իրականանայ, ա՛յն ատեն է որ

մեր Ռուսաստանէն անջատուելու հարցը կը դառնայ հրատապ: Մինչ այն՝ պէտք է որ մեր կուսակցութիւններու ծրագրին մէջ տեղ տրուի անոր»:

Յալիկով իրենց ազգային նպատակին արդէլը կը համարէ այն հանգամանքը, որ մահմետականները ցրուած են ամբողջ կայսրութեան մէջ եւ միայն 15 նահանգներու մէջ կը ներկայացունեն մեծամասնութիւն—վեց նահանգներու մէջ 90%, երեք նահանգներու մէջ՝ 75% եւ վեց նահանգներու մէջ 50%:

Ուրիշ արդէլք մըն է, իր կարծիքով, պետական գործերը վարելու համար հարկ եղած պատրաստութիւնը ունեցող մարդոց պակասը, եւն: Եւ կը շարունակէ —

«Ռուսաստանի համար երեք տեսակ սահմանադրութեան ձեւեր կրնան նկատի առնուիլ. 1) Համադաշնակցութիւն, 2) Դաշնակցութիւն, եւ 3) Կեդրոնացեալ Պետութիւն»:

«Ռուսաստանը բաժնել անջատ պետութիւններու պիտի նշանակէր կործանել զայն: Ատոր կողմնակից չենք կրնար ըլլալ, որովհետեւ մեր կուլտուրական եւ քաղաքական նպատակներու իրագործումը Ռուսաստանի անկման հետ չի ներդաշնակիր: Մեր կուլտուրական յառաջդիմութիւնն ու զարթնող իսլամական Արեւելքը պէտք ունին Ռուսաստանին իրեւ ամբողջական պետութիւն: Այս հիմերուն վրայ մենք կը մերժենք համադաշնակցական վարչաձեւը»:

«Գանք դաշնակցութեան: Այսօր Ռուսաստանի մէջ ապրող բոլոր ոչ-ռուսերը, անոնց կարքին եւ մահմետականները, կը հաւատան, թէ դաշնակցային վարչաձեւի միջոցով միայն կարելի է լուծել ազգութիւններու հարցը»:

«Երբ կը նայինք նորադոյն պատմութեան, մեր ուշադրութիւնը կը գրաւէ այն, որ Ամբրիկան նախ եւ առաջ համադաշնակցային վարչաձեւ ունէր, յետոյ զայն փոխեց դաշնակցայինի, իսկ վերջերս կը հակի դէպի կեդրոնացեալ կառավարութեան: Նոյնը Գերմանիոյ եւ Աւստրիոյ մէջ»:

«Եթէ Ռուսաստանը որոշէ դաշնակցային վարչաձեւ ունենալ, այն ատեն թուրքիստանի, Կովկասի, Վոլգայի շրջանի մահմետականները պիտի ստանան սեփական ինքնավարութիւն: Ատով սակայն պիտի խորտակուին մեր յոյսե-